# Տ. ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՇԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(19 փետրվարի 2009 թ.)

Անվամբ Հոր և Որդվոյ և Հոգվույն Սրբոյ. Ամեն:

*«Երանի՛ անոնց, որոնք կհալածվին արդարության համար, որովհետ– անոնց պիտի ըլլա երկնքի արքայությունը»:*

(Մտթ. Ե 10)

Սիրելի՛ հավատացյալներ, երբ որ Ավետարանը կկարդանք մենք, հոն կնշմարենք հակադարձված տրամաբանություն մը, որ կուզե մեզմե այս աշխարհին տարբեր աչքերով նայիլ և դիտել: Մեր Տերը կըսե. «Ան որ մեծնալ կուզե, պետք է փոքրանա: Շատ վերջիններ առաջիններ պիտի ըլլան, շատ առաջիններ՝ վերջին պիտի ըլլան»:

Եթե դուք կուզեք Աստծո արքայություն մտնել, պետք է դառնաք և մանուկներու պես ըլլաք: Կըսե՝ երանի աղքատներուն, երանի սգավորներուն և կըսե՝ շատ մը պոռնիկներ ավելի առաջ կմտնեն Աստծո արքայություն, քան փարիսեցիները: Եվ մենք կդժվարանանք այս հակադարձված տրամաբանությունը հասկնալու, որովհետև այս տրամաբանությունը կուզե, որ մենք դավաճանինք մեր աչքերուն. զոր օրինակ մեր աչքերը չըսեն՝ երանի աղքատներուն, այլ կըսեն՝ երանի հարուստներուն, մեր աչքերը չըսեն՝ երանի սգավորներուն, ճիշտ հակառակն է, մեր աչքերը կըսեն՝ երանի խնդացողներուն, մեր աչքերը կըսեն՝ փառավոր են անոնք, որոնք մեծ են և սպասավորություն կընդունին, քան թե նրանք, որ կը սպասարկեն ուրիշներուն:

Ինչ պետք է ընել, որպեսզի հասկնալ Ավետարանի այս տրամաբանությունը: Նայեցեք Ավետարանը՝ Տեր Հիսուս Քրիստոսի կյանքի համառոտակի ամփոփումն է, և հոն մենք կտեսնենք այս հակադարձված տրամաբանության մարմնացումը: Հրեա ժողովուրդը կսպասեր, որ Մեսիան ծնվեր: Անիկա պիտի ըլլար Իսրայելի փրկիչը, և ի վերջո կծնի Մեսիան, բայց ո՞ր՝ ախոռի մեջ, մսուրի մեջ: Ան, որ պիտի փրկեր, նոր թագավոր պիտի ըլլար, բայց Հերովդես թագավորի առջևէ կփախչի և հետո երեսուն տարիներ ամբողջ՝ ոչ մեկ լուր չկա այս Մեսիայեն: Ինչ կընե, ատաղձագործությամբ կզբաղի և հետո երեք տարի կքարոզե, հետո կբռնեն խաչ կհանեն՝ ձեռքերեն և ոտքերեն կգամեն փայտին վրա: Եվ մենք կըսենք, որ այս մարդը, որ ինք զինք չփրկեց խաչեն, ա՞յդ է փրկիչը:

Տարօրինակ, տարօրինակ, որովհետև մեք կուզենք առաջնորդվիլ մեր աչքերով: Իսկ Ս. Գիրքը կըսե, որ դուք պետք է ականջներով առաջնորդվիք, որովհետև հավատքի օրգանը աչքը չէ՝ ականջն է: Անոր համար մեր Տեր Հիսուսը շատ մը խոսքերեն հետո կկանգներ և

կըսեր. «Ով որ ականջ ունի, թող ան լսե»: Աստված մեզի կհայտնե Ս. Գրքի մեջ: Ի վերջո Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով մեզ կհայտնե, որ պետք չէ առաջնորդվիլ մեր տեսածին ու անմիջականին հետ, պետք է ականջ տանք՝ Աստված ինչ կըսե, տիեզերքի Արարիչը, ամեն ինչի դատավորը և տնօրինողը՝ Ան ի՞նչ գաղափար ունի մեր կյանքի մասին, լսենք անիկա և ան կըսե՝ երանի աղքատներուն, երանի սգավորներուն, երանի հալածվողներուն, երանի անոնց, որոնք կծառայեն, երանի անոնց, որոնք ցորենի հատիկը կդառնան և կինան գետնին և այդպես երբ որ մենք նայինք Տեր Հիսուսին ծնունդին ախոռի մեջ ծնած, տիեզերքի, աշխարհի մեծագույն ծնունդն է Անկիա : Երկու ամիս մենք կտոնենք այդ սքանչելի ծնունդը, որ անասուններու մեջ կծնի Աստված: Եվ խաչին վրա գամված, ինքզինք չփրկած Մեսիային կնայինք մենք և կըսենք, որ հաղթեց հոն, մահվան հաղթեց, եսասիրությանը հաղթեց, մեր աշխարհի բոլոր մեղքերուն հաղթեց, սատանային հաղթեց:

Պետք էր որ այս նախամուտը ընեի, որպեսզի հասկնայինք, թե այսօր մենք ինչ կտոնենք. Սրբոց Վարդանաց տոնը: Մենք այսօր մեր պարտությունը կտոնենք, 451 թվականին հայկական բանակը հսկա պարսիկ բանակին առջև պարտված է, 1036 նահատակներ տված է և 1550 տարիէն ավելի ահա՛ կտոնենք այս պարտությունը. տարօրինա՛կ: Չեք կրնար հասկնալ, եթե քրիստոնյա չէք, չեք կարող հասկանալ, եթե հայ չեք: Պետք է հասկնալ Տեր Հիսուսի խաչելության խորհուրդը և պետք է հասկնալ, մի քիչ իմանալ հայոց արյունոտ պատմությունը: Եվ այն ատեն մենք Ավարայրի պատերազմին կնայինք, հոն մեր պատմության ամենեն խորհրդավոր պարտությունը կդիտենք և կըսենք, որ մեր ազգի ամենեն փառավոր էջերեն մեկը ապրվեցավ այս պարտության մեջ, որովհետև խաչը պարտություն չէ ընդմիշտ, խաչը հաղթանակ է և անիկա հարությամբ կպսակվի ի վերջո: Ավարայրը պարտություն չէ, անիկա հաղթանակ է, որովհետև ամբողջ մի ազգի հարությամբ կվերջանա:

Երբ որ մենք, սիրելիներ՛ը, կնայինք մեր կյանքին, այս գաղափարով մեծ մխիթարանք կրնանք գտնել, որովհետև մենք ալ շատ հաջողած մարդիկ չենք հաճախ և պարտություններ չեն պակսիր մեր անձնական կյանքի մեջ, կրնանք լալ, կրնանք ողբալ, բայց մեկ հարցում պետք է ընենք: Ավետարանին մեջ և կամ Վարդանանցը ինչպե՞ս պարտութենեն հաղթանակի կվերածվի, կվերածվի, որովհետև անոր մեջ Աստված կա, որովհետև անոր մեջ արդարություն կա: Երբ որ Աստված ձեր կողմեն է, երբ որ արդարության հողմերը ձեր կողմեն կփչին, կարելի չէ, որ դուք պարտության ենթարկվիք: Ի վերջո կհաղթեք: Բնության օրենքն է՝ փայտը ձեր ուզածին չափ ջուրին մեջ ընկղմեք, անիկա ջուրին երեսը պիտի ելլե և ծուխը պիտի բարձրանա երկինք: Քանի որ այս է իրենց բնությունը: Արդար մարդու բնությունը ևս այսպես է. ուզե անիկա հալածվի, ուզե անիկա աղքատ ըլլա, չքավորություն քաշե, հիվանդանա, ուզե անիկա մեռնի, կտոր-կտոր ընեն անոր մարմինը, առյուծներու առջև նետեն՝ ան պիտի հաղթե ի վերջո, որովհետև Աստված անոր հետ է:

Ինչո՞ւ համար մենք չենք տեսներ այս տրամաբանությունը, ինչո՞ւ համար մենք կդժվարանանք հետևիլ այս տրամաբանությանը, ինչո՞ւ մեր աչքերով կհետևինք: Անգլիկան աստվածաբան մը կըսե, որ որովհետև մենք բոլորս մեղավոր ենք և մեղքը շրջեր է բոլորը, ամեն ինչ գլխիվայր դարցուցած է, հետևաբար մենք բարիին չար կըսենք, չարին բարի կըսենք, օգտակարին վնասակար, վնասակարին օգտակար կըսենք և ասկե փրկվելու համար մենք

ամենքս գլխիվայր պիտի դառնանք և այդպես դիտենք ամեն ինչ: Այն ատեն շիտակ կտեսնենք, որովհետև երբ որ այդպես կնայինք աշխարհին և մարդոց, միշտ մեր տեսած ամեն ինչին կմիանա երկինքը, ինչ որ կտեսնենք երկինքը կմիանա, որ մեր առօրյա տրամաբանության մեջ այդ կպակսի: Մենք հիվանդությունը կտեսնենք, կըսենք որ աշխարհի վերջն է: Մենք աղքատ մեկը կտեսնենք, օրերով կողբանք, բայց եթե գլխիվայր նայինք, Տեր Հիսուսին նայածին պես նայինք, միշտ երկինքը պիտի տեսնենք և այն ատեն պիտի հասկնանք, որ ամեն ինչ մեր տեսածին պես չէ, մենք շիտակ չենք տեսներ: Ոչ չարերու վերջավորությունը կտեսնենք, ոչ ալ բարիներու վարձատրությունը:

Այսօր մենք Վարդանանքը կտոնինք, մարդիկ, որոնք որոշեցին դիմադրել իրենցմե պատիկ-պատիկ ավելի հզոր բանակի մը: Հոնտեղեն հոստեղեն հավաքված զինվորներով, որոնցմե շատերը առաջին անգամ կռիվ կերթային, գյուղացիներ, եկեղեցականներ էին նույնիսկ, իրենց կյանքին մեջ առաջին անգամ սուր պիտի բռնեին, նիզակ պիտի բռնեին և երբ որ տեսան իրենցմե հինգ-վեց անգամ մեծ բանակը, հավանաբար շատ լավ հասկցան, թե ինչ պիտի պատահի վաղը, և գիտեին նաև, որ իրենց մեջ դավաճաններ ալ կային: Եվ այս բոլորին դիմաց աչքէ անցուցին իրենց կեանքի իմաստը և ապրելու նպատակը վերստին:

Մայիսի 26-ն էր, կանաչ էր դաշտը, ծաղիկներ կային, գեղակներ աղվոր, խնջույք ընելու օր մըն էր: Կուզեին իրենց բալիկներու հետ ըլլալ, կուզեին հեռանալ, չէին ուզեր մեռնիլ, չէին ուզեր կռվիլ, եթե առիթ ըլլար հետ կդառնային, իրենց այգիին կապույտ երկինքին, կյանք վայելելու համար, բայց չէին կրընար, որովհետև պահ մը կուգա, որ հոն սրիպված եք դուք ձեր կյանքին հաշվեհարդարը տեսնալու: Չեք կրընար շարունակ հավատքեն խոսիլ, և ահա օր մը այդ հավատքը փորձության կենթարկվի անխուսափելիորեն: Չեք կրնար շարունակ ձեր մանուկներուն և երիտասարդության հայրենասիրության դասեր տալ և հետո օրը կուգա և դուք իրականության հետ դեմ հանդիման կգաք, զոհ կուզեն այդ բոլոր արժեքները և կտեսնեք որ ձեզմե զատ ուրիշ մեկը չկա հոն սուրը քաշելու: Չէին կրնար փախչիլ, պիտի երթային, եթե մահ՝ մահ, եթե վիրավորանք՝ վիրավորանք, եթե հաղթանակ՝ հաղթանակ: Պիտի երթային: Գիշեր էր, վեր նայեցան, ասպղերը տեսան մահվան մէջ փայլող աչքերու նման եւ հասկցան մահը որպես անմահություն: Անոնք իրենց կյանքի բոլոր պարտությանց վերև տեսան երկինքը և հասկցան ամեն ինչ: Եվ քալեցին իրենց մահվան ընդառաջ: 1036 մարդ ինկան: Շատ կարևոր էր մեր ազգին համար այս, որովհետև մեր ամբողջ պատմությունը կամփոփե այս կեցվածքը: Մենք երախտապարտ ենք Վարդանանցի հերոսներուն և անոց պես բյուր բյուրոց նահատակներուն, որովհետև եթե անոնք այս քաջությունը չունենային, մենք այսօր չէինք կրնար հոս գտնվիլ: Հայու անունը սրբված կըլլար աշխարհի վրայեն:

Մենք Վարդանանցեն շատ կարևոր բան մը ևս կսորվինք, սիրելինե՛ր: Չեմ ուզեր հերոսական մեծ բառերով խոսիլ, բայց Վարդանանք մեզի կյանքի դաս մը կսորվեցնեն: Նայեցե՛ք, 1550 տարիեն ավելի ժամանակ անցեր է, և տակավին մենք իրենց կնայինք և այդ հեռու ժամանակեն ներշնչանք կստանանք, հույս կստանանք: Եվ ասիկա սա ըսել է՝ եթե մեկը լավ բան մը ընե, եթե մեկը իր գտնված տեղը հաստատ մնա և եթե մեկը զոհողություն կատարե, ուրիշները տեսնելով օրինակ կվերցնեն եւ կը կրկնեն արդարությունը, և այսպիսով բարին կավելնա, լույսը կավելնա: Մեզի դիտող աչքեր կան, մեր երեխաները, երիտասարդ-

ները և աշակերտները. եկե՛ք մենք ալ Վարդանանց հերոսներու պես լավ արարքներով փաստենք մեր հավատքը եւ ներշնչանքի աղբյուր հանդիսանանք անոնց:

Ավարայրի ճակատամարտին ինկած հերոսներեն ոմանց անունները պահված են և այդ սուրբերեն մեկի անունն էր ԳԱՐԵԳԻՆ, որը կը կրէ մեր ներկա հայրապետը, Նորին Սրբություն Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Որդիական սիրով և ակնածանքով կը շնորհավորենք Նորին Սրբության անվանակոչությունը:

Քաղաքական պատմությունը կը դասավորվի թագավորական տոհմերով: Իսկ եկեղեցական պատմությունը կշերտավորվի կաթողիկոսներու շրջաններով, որովհետև ամեն կաթողիկոս իր յուրահատուկ առաքելությունը ունի և իր կնիքը կդարնե մեր եկեղեցական կյանքի և հավատքի պատմության վրա: Եվ ահա քսանմեկերորդ դարուն՝ այս շատ բախտորոշիչ շրջանին, Աստված և մեր ազգը ընտրած է Նորին Սրբությունը՝ մեր գլուխը՝ որպես հովվապետ և քահանայապետ՝ հովվելու համար մեզ ու նոր հորիզոններ բանալու մեր առջև: Մեք գիտենք, ո՞վ չգիտեր, որ բոլոր հաստատությունները իր գլուխով կզորանան կամ կտկարանան: Այսօր Հայաստանյայց եկեղեցին կզորանա, ամեն տեղ մենք կտեսնենք անիկա, այս արկած մը չէ, որովհետև մենք ունինք հայրապետ մը, որ ժրաջան կաշխատի, քրտինք ունի, աշխատանք ունի, վաստակ ունի և սրտամաշություն ունի՝ մեզ համար մտահոգվող: Մենք շատ հանգիստ ենք մեր սենյակներու մեջ, մենք միայն պատասխանատու ենք մեր ընտանիքին, սակայն հայրապետ մը ունինք, որ Ամենայն Հայոց է՝ ի Հայաստան և ի Սիսուռս աշխարհի. բոլոր հայերու հոգիներու փրկության պարտականությունը դրված է իր ուսերուն վրա, և մենք կտեսնենք, որ այդ գործը լա՛վ կկատարվի:

Վեհափա՛ռ Հայրապետ, մենք հոս ենք, հավաքված ենք եկեղեցականներս և ժողովուրդը՝ Ձեր զավակները, կաղոթենք Ձեր առողջության համար, արևշատության համար, որովհետև Դուք մեր ազգի միության խորհրդանիշն եք, եթե արտոնեք այդ բառը գործածել, մեր միության իկոնան եք: Անոր համար է, որ մենք մեր տուներու մեջ, եկեղեցիներուն մեջ, մեր աշխատասեղաններուն վրա ձեր պատկերը ունինք: Մենք դժբախտ ազգ մըն ենք. երկու երրորդը մեր ազգին տակավին Սիսուռքի մեջ սփռված է, ամեն օր կանդրադառնանք այս ցավալի իրողության և դուք ահա մեր այս հույժ էական ազգային միության խորհուրդներեն մեկն եք: Ձեզ հետ մենք կբարձրանանք, ձեզ հետ մենք կփառավորվինք, պետք ունինք ձեր առաջնորդության և Հայաստանի Հանրապետությունը վերստին քրիստոնեացման այս ընթացքին պետք ունի Առաքելական սուրբ Եկեղեցիի աջակցության, որուն դուք կը գլխավորեք:

Չեմ ուզեր խոսքս երկնցնել, բայց անոնք, որոնք հոռետես են Հայ եկեղեցիի նկատմամբ, կուզեմ օրինակ մը տալ, որպեսզի ավելի անաչառ ըլլանք մեր Հայ Առաքելական եկեղեցիի ներկայի մասին: Ես տասնչորս փետրվարին թրքական հեռուստաալիքը կդիտեի. ես Թուրքիայից եմ: Սիրելիներու օրն էր: Տասը տարի առաջ Թուրքիայում չէր տոնվեր այդ տոնը, հիմա ամեն տեղ կտոնեն: Յոթանասուն միլիոն իսլամ երկրին մեջ Արևմուտքը թափանցած է, չեն կրնար դիմադրել, որպեսզի այդ ավանդությունը իրենց երկրին մեջ արմատ չբռնե, որովհետև օտար է իրենց: Կղերականները կբարկանային, բայց ուժ չունեին անիկա կանխարգելու համար: Ութսուն հազար մզկիթ կա Թուրքիայում, հարյուր հազար կրոնավոր ունին, իրենց կրոնական տարեկան բյուջեն տասը միլիարդ դոլար է: Եվ չեն կրնար արգելք ըլլալ Արևմուտքեն եկած այս հոսանքին: Նույն բանը պատահեցավ Հայաստան. սիրելինե-

բու օրը՝ Ս. Վալենտինի օրը տոնեցին: Քրիստոնեական տոն մըն է, շատ վնաս չկա, կրնա ըսել մեկը: Մերինը չէ սակայն, իսկ մենք Ս. Սարգիսը ունինք, Տյառնընդառաջը ունինք, ուրիշ օրեր ունինք: Եվ եկեղեցին՝ Հայ Առաքելական եկեղեցին, մի քանի տարի առաջ ձեռնարկեց փայփայելու այս տոները պետության հետ միասին, մամուլի հետ միասին, եկեղեցականներու ջանքերով: Եվ այսօր մենք Ս. Վալենտինի տոնը չենք տոներ: Այս հաջողություն է, կրնաք ըսել փոքր է, չէ, փոքր չէ: Ասիկա ցույց կուտա, թե որքան հաստատված է Հայ Առաքելական եկեղեցիի հավատքը մեր ժողովուրդի մեջ, գենետիկայի մաս դարձած է, պետք է արթնցնենք անիկա և այդ պիտի ավելանա:

Ուրեմն նայեցե՛ք, ընելիք շատ գործեր ունինք մենք, բայց ամեն ասպարեզ Վարդանանցի հերոսներու պես հաստատ կեցած հավատացյալներ կպահանջե:

Եկեք աղոթենք՝ այսօրվան օրհնությունը մեր բոլորին վրա ըլլա: Քիչ հետո պիտի կատարենք Հայրապետական մաղթանքը, եկե՛ք միացնենք մեր հայության բոլոր աղոթքները մեր Հայրապետի առողջության և Հայրապետական Աթոռի անսասանության համար:

Տերը օրհնե ձեր բոլորը: